

Ով զգայարանների մոլորութեան է յանձնում հոդին, նրա բանականութիւնը քշուում է ինչպէս նաւը քամիներից ջրերի վրայ:

Այսպէս ուրեմն նա, որի զգայարաններն ամէն կողմից փակուած են զգայական առարկաների առաջ, կատարեալ իմաստուն է:

Ուր գեշեր է բոլոր արարածների համար, արթուն է ինքնազուսպ մարդը. և ուր արթուն են արարածները, գեշեր է իմաստուն մենակեացի համար:

Մշտագեղուն անփոփոխ Ովկէանի մէջ կորչում են գետերը. և մարդը, որի մէջ կորչում են ցանկութիւնները բոլոր՝ խաղաղութիւնն է գտնում. բայց ոչ հաճոյասէը:

Վանելով բոլոր ցանկութիւնները, թող մարդը գնայ առանց ցանկութեան, առանց տենչանքի, առանց հպարտութեան. նա դէպի խաղաղութիւնն է գնում:

Ահաւասիկ աստուածային հանգիստը. ով նրան հասաւ չետանջուում. և ով մնաց նրա մէջ մինչև վերջին օրը, նա շիշանում է նիբվանայի մէջ¹⁾:

Այսեղ վերջանում է Թինագալագի՛տայի երկրորդ զլուխը, որի անունն է բանական գիտութեան նօգա:

Հ. Ահաւեան

Նարունակելի



Թ. Ի Թ. Ե Ռ Ն Ի Կ

(Ֆէտից)

Ինձ մի՛ հարցրու, որտեղից եկայ,

Եւ ուր եմ գնում.

Աստ ծաղկի վերայ ես դադար առայ,

Հանգչել եմ ուզում:

Արդեօք շատ երկար, անհոգ, անտարբեր,

Պիտ այսպէս հանգչեմ,

Բայց ոչ, ոչ. ահա կուղղեմ իմ թեւեր՝

Որ դէպ վեր թռչեմ:

Գետը

1) Մարդկային հոգու վերջնական ձուլումը Աստուծոյ հոգու մէջ: